«Մառնիկ» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝
անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հաշվետու ընկերություն 5
2. Պատրաստման հիմունքներ 6
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ 6
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում 6
5. Հասույթ 7
6. Վաճառքի ինքնարժեք 8
7. Իրացման ծախսեր 8
8. Վարչական ծախսեր 8
9. Այլ ծախսեր 8
10. Այլ եկամուտ 9
11. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր 9
12. Շահութահարկի գծով ծախս 9
13. Հիմնական միջոցներ 11
14. Վարձակալություն 12
15. Տրված փոխառություններ 13
16. Պաշարներ 13
17. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 13
18. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 14
19. Կապիտալ և պահուստներ 14
20. Կապիտալի կառավարում 14
21. Վարկեր և փոխառություններ 15
22. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 16
23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում 17
24. Պայմանական դեպքեր 20
25. Գործարքներ կապակցված կողմերի հետ 21
26. Չափման հիմունքներ 21
27. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր 21

Փի-Էյչ-Փի Փարթներզ ՓԲԸ
PHP Partners CJSC

Հասցե՝ ՀՀ, Երևան, Կոմիտաս 59/12, 160/1 գրասենյակ
Address: RA, Yerevan, 59/12 Komitas Avenue, Office 160/1

Էլ-փոստ
E-mail general@php.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մառնիկ ՍՊԸ-ի մասնակիցներին

Հաշվետվություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Մառնիկ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերության) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Պաշարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են 351,921 հազար դրամով՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ: Մենք նշանակվել ենք որպես Ընկերության աուդիտոր պաշարների գույքագրման անցկացման օրվանից հետո և, համապատասխանաբար, չենք կարողացել հետևել տարեվերջի գույքագրման գործընթացին: Մենք չկարողացանք հավաքագրել բավարար համապատասխան ապացույցներ պաշարների վերջնական քանակի վերաբերյալ այլընտրանքային աուդիտի ընթացակարգերի միջոցով:

Հետևաբար, մենք չկարողացանք որոշել, թե արդյոք անհրաժեշտ է որևէ ճշգրտում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված պաշարների և այդ պահին ավարտված տարվա վաճառքի ինքնարժեքի, տարվա շահույթի և չբաշխված շահույթի համապատասխան գումարներում:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները չեն ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորի կողմից: Հետևաբար, 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համադրելի տեղեկատվության համար ներկայացված համապատասխան թվերը աուդիտ անցած չեն: Մեր վերապահումով կարծիքը չի փոփոխվել այս հարցի վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զերծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության գործընթացների մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության գործընթացների արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքների հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Հովհաննես Պետրոսյան
Տնօրեն

Փի-Էյչ-Փի Փարթնըրզ ՓԲԸ

30 հունիսի 2026թ.

Լիլիթ Մինասյան
Աուդիտորական ծառայությունների ղեկավար

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Ծնթգ.	2025թ.	2024թ.
Հասույթ	5	4,043,753	3,488,594
Վաճառքի ինքնարժեք	6	(3,136,920)	(2,871,573)
Համախառն շահույթ		**906,834**	**617,021**
Իրացման ծախսեր	7	(436,441)	(313,989)
Վարչական ծախսեր	8	(230,818)	(190,572)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ		(4,551)	(35,183)
Այլ ծախսեր	9	(27,265)	(13,461)
Այլ եկամուտ	10	21,162	23,976
Գործառնական գործունեության արդյունքներ		**228,920**	**87,792**
Ֆինանսական եկամուտ		49,875	153,330
Ֆինանսական ծախսեր		(300,867)	(130,579)
Զուտ ֆինանսական (ծախսեր)/եկամուտ/	**11**	**(250,992)**	**22,751**
Վնաս/շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**(22,072)**	**110,543**
Շահութահարկի գծով ծախս	12	(24,125)	(22,911)
Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**(46,197)**	**87,632**

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Գրիգոր Մանթաշյան
Տնօրեն

Աշոտ Խնկոյան
Գլխավոր հաշվապահ

«ՄԱՌՆԻԿ»
"МАРНИК"
"MARNIK"
05304525

Կից 1-ից 27 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	Ծնթգ.	*31 դեկտեմբերի 2025թ.*	*31 դեկտեմբերի 2024թ.*
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	1,064,488	869,155
Ոչ նյութական ակտիվներ		5,819	4,092
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	14	178,890	137,308
Տրված փոխառություններ	15	494,150	497,907
Հետաձգված հարկային ակտիվ	12	25,113	15,568
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		7,417	-
Ոչ ընթացիկ ակտիվներ		**1,775,877**	**1,524,030**
Պաշարներ	16	351,921	315,433
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	620,193	551,571
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	13,886	26,705
Ընթացիկ ակտիվներ		**986,000**	**893,709**
Ընդամենը ակտիվներ		**2,761,877**	**2,417,739**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	19,20	50,050	50,050
Չբաշխված շահույթ		100,887	252,348
Մասնակիցներին բաշխումներ		(135,257)	(94,117)
Ընդամենը սեփական կապիտալ	19,20	**15,680**	**208,281**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	21	865,173	846,330
Վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորություններ	14	98,031	69,612
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**963,204**	**915,942**
Վարկեր և փոխառություններ	21	1,144,599	684,385
Վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորություններ	14	39,959	1,525
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	22	590,429	607,606
Շահութահարկի գծով պարտավորություն		8,006	-
Ընթացիկ պարտավորություններ		**1,782,993**	**1,293,516**
Ընդամենը պարտավորություններ		**2,746,197**	**2,209,458**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**2,761,877**	**2,417,739**

Կից 1-ից 27 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	*Կանոնադրական կապիտալ*	*Չբաշխված շահույթ*	*Մասնակից-ներին բաշխումներ*	*Ընդամենը*
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	50,050	269,979	-	**320,029**
Համապարփակ ֆինանսական արդյունք				
Տարվա շահույթ	-	87,632	-	**87,632**
Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	87,632	-	**87,632**
Շահաբաժնի բաշխում	-	(105,263)	-	**(105,263)**
Այլ բաշխումներ	-		(94,117)	**(94,117)**
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50,050**	**252,348**	**(94,117)**	**(208,281)**
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	50,050	252,348	(94,117)	**(208,281)**
Համապարփակ ֆինանսական արդյունք				
Տարվա վնաս	-	(46,197)	-	**(46,197)**
Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	(46,197)	-	**(46,197)**
Շահաբաժնի բաշխում	-	(105,263)	-	**(105,263)**
Այլ բաշխումներ	-	-	(41,141)	**(41,141)**
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50,050**	**100,888**	**(135,258)**	**15,680**

Կից 1-ից 27 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Ծնթգ.	*2025թ.*	*2024թ.*
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Մուտքեր վաճառքից՝ ներառյալ ԱԱՀ		4,874,899	4,053,658
Վճարումներ մատակարարներին		(4,205,837)	(3,274,734)
Վճարումներ աշխատակիցներին		(305,259)	(214,896)
Վճարումներ հարկերի գծով		(187,942)	(228,277)
Այլ վճարումներ/մուտքեր		(11,718)	(12,160)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		**164,143**	**323,591**
Վճարված շահութահարկ		(6,046)	(51,728)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**158,097**	**271,863**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(141,044)	(54,653)
Տրված փոխառություններ		(292,044)	(255,248)
Փոխառությունների մարում		267,867	112,682
Ներդրումային գործունեությունում օգտագործված դրամական հոսքեր		**(165,221)**	**(197,219)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Նոր վարկերի ստացում		3,686,344	2,624,602
Վարկերի մարում		(3,315,150)	(2,492,769)
Վարձակալության գծով վճարումներ, հիմնական մաս		(112,353)	(28,129)
Շահաբաժնի վճարում		(34,500)	(63,000)
Վճարված տոկոսներ		(169,079)	(130,579)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ ֆինանսավորման գործունեությունում օգտագործված դրամական հոսքեր		**55,262**	**(89,875)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**48,138**	**(15,231)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ		26,705	43,576
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(60,957)	(1,640)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ	18	**13,886**	**26,705**

Կից 1-ից 27 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1. Հաշվետու ընկերություն

(ա) Կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Մառնիկ» ՍՊԸ-ն («Ընկերություն») գրանցվել է 2000 թվականի փետրվարի 14-ին որպես սահմանափակ պատասխանատվության ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն:

Ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մայակովսկի գյուղ, 16-րդ փողոց, 26/1 շենք:

Ընկերության հիմնական գործունեությունը Վալիո ապրանքանիշի ապրանքների ներմուծումն է և մանրամեծածախ վաճառքը Հայաստանում, ինչպես նաև Ֆիննի ապրանքանիշի ներքո սեփական արտադրանքի արտադրությունը և վաճառքը:

Ընկերության մասնակիցներն են հանդիսանում ֆիզիկական անձիք: Ընկերության վերջնական հսկող կողմ է հանդիսանում պարոն Գրիգոր Մանթաշյանը, ով նաև իրականացնում է Ընկերության տնօրենի գործառույթը:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն դրանց պահանջները կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա լինել հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար: Բացի այդ, շարունակական բնույթ կրող ռազմական հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև, որի ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել են անորոշությունը գործարար միջավայրում: 2025թ. օգոստոսին Հայաստանը և Ադրբեջանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով արտահայտեցին երկկողմ հարաբերությունները կարգավորելու փոխադարձ մտադրություն և հանձնառություններ ուղղված լարվածության նվազեցմանը, սահմանազատման շուրջ քննարկումների առաջխաղացմանը և տարածաշրջանում կայունության խթանմանը: Այնուամենայնիվ, հռչակագրի գործնական իրականացումը և երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական գործունեության վրա մնում են անորոշ:

Միաժամանակ, 2026թ. ընթացքում աշխարհաքաղաքական լարվածությունը զգալիորեն սրվել է Մերձավոր Արևելքում ռազմական գործողություններից, այդ թվում՝ Իրանի մասնակցությամբ զարգացումներից հետո: Այդ իրադարձությունները մեծացրել են անորոշությունը համաշխարհային ֆինանսական շուկաներում, խաթարել են մատակարարման շղթաները և նպաստել են էներգակիրների գների տատանողականությանը: Ընկերությունը շարունակում է գնահատել այդ զարգացումների հնարավոր ազդեցությունը:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության հավաստում

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՍՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՍՄ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում գնահատումները վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա այդ փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ:

Ենթադրությունների և գնահատման անորոշության (բացառությամբ իրական արժեքի չափման) վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 17, 23՝ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ:

Իրական արժեքի չափում

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- *1-ին մակարդակ.* նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաների գնանշվող գները (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության համար ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող) դիտելի ելակետային տվյալներ, բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գների:
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումներն Ընկերությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

5. Հասույթ

(ա) Հասույթի ուղղություններ

Ընկերությունը հասույթը հիմնականում ստանում է ապրանքների և արտադրանքի վաճառքից:

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Ապրանքների վաճառք	3,730,797	3,257,606
Արտադրանքի վաճառք	312,956	230,988
Ընդամենը հասույթ	**4,043,753**	**3,488,594**

(բ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն գնորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի և պայմանագրերի գծով պարտավորությունների վերաբերյալ:

հազ. դրամ	***Ծնթգ.***	***31 դեկտեմբերի 2025թ.***	***31 դեկտեմբերի 2024թ.***
«Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված դեբիտորական պարտքեր	17	498,657	513,873
Պայմանագրի գծով պարտավորություններ		-	-

(գ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է գնորդի հետ հաստատված պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ գնորդին է փոխանցում ապրանքի նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն գնորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Հասույթի տեսակը	***Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ վճարման նշանակալի պայմանները***	***Հասույթի ճանաչման քաղաքականություն***
Ապրանքների վաճառք	Ընկերության կատարման պարտականությունն է ապրանքի մատակարարումը գնորդին: Ապրանքների մատակարարումը կատարվում է մեծածախ եղանակով՝ այլ մանրածախ առևտուր իրականացնող անձանց, ինչպես նաև Ընկերության խանութներում անմիջականորեն վերջնական սպառողին: Այլ մանրածախ առևտուր իրականացնող անձանց վաճառքները հիմնականում հետվճարային եղանակով են, սովորաբար 60 օրվա ընթացքում: Ընկերության խանութներում վաճառքն իրականացվում է անմիջական վճարման պայմաններում:	Հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի պահին՝ երբ ապրանքների նկատմամբ հսկողությունը փոխանցվում է գնորդին
Արտադրանքի վաճառք	Ընկերության կատարման պարտականությունն է արտադրանքի մատակարարումը գնորդին: Արտադրանքի մատակարարումը կատարվում է մեծածախ եղանակով՝ այլ մանրածախ առևտուր իրականացնող անձանց, ինչպես նաև Ընկերության խանութներում անմիջականորեն վերջնական սպառողին: Այլ մանրածախ առևտուր իրականացնող անձանց վաճառքները հիմնականում հետվճարային եղանակով են, սովորաբար 60 օրվա ընթացքում: Ընկերության խանութներում վաճառքն իրականացվում է անմիջական վճարման պայմաններում:	Հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի պահին՝ երբ արտադրանքի նկատմամբ հսկողությունը փոխանցվում է գնորդին

6. Վաճառքի ինքնարժեք

(ա) Ինքնարժեքի ուղղություններ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Վաճառված ապրանքների ինքնարժեք	2,759,560	2,647,126
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	377,360	224,447
	3,136,920	**2,871,573**

(բ) Վաճառված արտադրանքի ինքնարժեք

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Հումք և նյութեր	238,287	127,356
Աշխատավարձ և համապատասխան հարկեր	83,048	65,787
Մաշվածություն	12,018	5,721
Նորոգումներ և սպասարկում	41,453	13,092
Այլ	2,554	12,491
	377,360	**224,447**

7. Իրացման ծախսեր

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և համապատասխան հարկեր	180,974	141,146
Մարքեթինգ և գովազդ	134,231	107,696
Մաշվածություն	67,101	28,945
Վառելիք	28,210	23,270
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	25,394	9,494
Այլ	531	3,438
	436,441	**313,989**

8. Վարչական ծախսեր

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և համապատասխան հարկեր	161,855	133,003
Չփոխհատուցվող հարկեր և վճարներ	13,779	24,057
Մաշվածություն և ամորտիզացիա	10,350	9,191
Բանկային և ապահովագրության ծախսեր	8,737	6,818
Այլ	36,097	17,504
	230,818	**190,572**

9. Այլ ծախսեր

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	14,253	12,132
Տուգանքներ և տույժեր	7,514	-
Այլ	5,498	1,329
	27,265	**13,461**

10. Այլ եկամուտ

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Մատակարարից ստացված խրախուսում	13,212	21,838
Այլ	7,950	2,138
	21,162	**23,976**

11. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	-	103,693
Տրամադրված փոխառությունների զեղչման ազդեցությունից եկամուտ	49,875	49,637
Ֆինանսական եկամուտ	**49,875**	**153,330**
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(131,788)	-
Տոկոսային ծախս ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով (Ծնթգ. 21)	(160,208)	(126,331)
Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների գծով (Ծնթգ. 14)	(8,871)	(4,248)
Ֆինանսական ծախսեր	**(300,867)**	**(130,579)**
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր	**(250,992)**	**22,751**

12. Շահութահարկի գծով ծախս

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Ընկերությունը շահութահարկը վճարում է 18% դրույքաչափով (2024թ-ին՝ 18%):

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	(35,588)	(29,154)
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	11,463	6,243
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**(24,125)**	**(22,911)**

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում

	2025թ.		***2024թ.***	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Վնաս/ (շահույթ) մինչև շահութահարկով հարկումը	(22,072)		110,543	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	3,973	18	(54,069)	18
Զուտ չհարկվող եկամուտ/(չնվազեցվող ծախսեր)	(28,098)	(127)	31,158	(28)
	(24,125)	**(109)**	**(22,911)**	**(10)**

(բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

	Ակտիվներ		*Պարտավորություններ*		*Զուտ*	
հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	**31 դեկտեմբերի 2024թ.**	**31 դեկտեմբերի 2025թ.**	**31 դեկտեմբերի 2024թ.**	**31 դեկտեմբերի 2025թ.**	**31 դեկտեմբերի 2024թ.**
Հիմնական միջոցներ	-	-	(3,968)	(5,991)	(3,968)	(5,991)
Տրված փոխառություններ	7,407	9,325	-	-	7,407	9,325
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,946	2,250	-	-	6,946	2,250
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14,728	9,984	-	-	14,728	9,984
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**29,081**	**21,559**	**(3,968)**	**(5,991)**	**25,113**	**15,568**

(գ) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ

հազ. դրամ	*1 հունվարի 2025թ.*	*Շահույթում կամ վնասում ճանաչված*	*Սեփական կապիտալում ճանաչված*	*31 դեկտեմբերի 2025թ.*
Հիմնական միջոցներ	(5,991)	2,023	-	(3,968)
Տրված փոխառություններ	9,325	-	(1,918)	7,407
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,250	4,696	-	6,946
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9,984	4,744	-	14,728
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**15,568**	**11,463**	**(1,918)**	**25,113**

հազ. դրամ	*1 հունվարի 2024թ.*	*Շահույթում կամ վնասում ճանաչված*	*Սեփական կապիտալում ճանաչված*	*31 դեկտեմբերի 2024թ.*
Հիմնական միջոցներ	-	(5,991)	-	(5,991)
Տրված փոխառություններ	-	-	9,325	9,325
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	2,250	-	2,250
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	9,984	-	9,984
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**-**	**6,243**	**9,325**	**15,568**

13. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Շենքեր և կառուցվածք-ներ	Հող	Մեքենաներ և սարքավո-րումներ	Փոխադրա-միջոցներ	Կառուցման ընթացքում գտնվող	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	559	179,568	173,229	35,085	376,815	13,484	**778,742**
Ավելացումներ	-	-	70,213	47,561	104,032	10,462	**232,268**
Տեղափոխումներ	455,187	-	-	-	(455,312)	125	**-**
Օտարումներ	-	-	(4,333)	-	-	(4,447)	**(8,780)**
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**455,746**	**179,568**	**239,109**	**82,646**	**25,535**	**19,624**	**1,002,228**
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	455,746	179,568	239,110	82,646	25,536	19,623	**1,002,229**
Ավելացումներ	-	96,750	45,697	9,480	113,255	5,906	**271,088**
Տեղափոխումներ	138,735	-	-	-	(138,791)	56	**-**
Օտարումներ	-	-	-	-	-	-	**-**
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**594,481**	**276,318**	**284,807**	**92,126**	**-**	**25,585**	**1,273,317**
Մաշվածություն							
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	98	-	51,377	39,191	-	1,845	**92,510**
Տարվա մաշվածություն	28	-	20,727	18,889	-	2,218	**41,863**
Օտարումներ	-	-	(1,300)	-	-	-	**(1,300)**
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**126**	**-**	**70,804**	**58,080**	**-**	**4,063**	**133,073**
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	126	-	70,804	58,080	-	4,063	**133,073**
Տարվա մաշվածություն	15,815	-	35,645	22,201	-	2,095	**75,755**
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**15,941**	**-**	**106,449**	**80,281**	**-**	**6,158**	**208,829**
Հաշվեկշռային արժեք							
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**455,620**	**179,568**	**168,305**	**24,566**	**25,535**	**15,561**	**869,155**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**578,540**	**276,318**	**178,358**	**11,844**	**-**	**19,427**	**1,064,488**

12,018 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2024թ-ին՝ 5,721 հազար դրամ) գրանցվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 53,408 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2024թ-ին՝ 26,976 հազար դրամ)՝ իրացման ծախսերի կազմում և 10,330 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2024թ-ին՝ 9,165 հազար դրամ)՝ վարչական ծախսերի կազմում:

14. Վարձակալություն

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

հազ. դրամ	***2025թ.***		***2024թ.***	
	Փոխադրա-միջոցներ	***Մեքենաներ և սարքավորումներ***	***Փոխադրա-միջոցներ***	***Մեքենաներ և սարքավորումներ***
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	78,685	58,623	41,367	38,250
Ավելացումներ	53,386	22,326	48,341	22,326
Մաշվածություն	(21,741)	(12,389)	(11,023)	(1,953)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**110,330**	**68,560**	**78,685**	**58,623**

(բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	8,871	4,248
	8,871	**4,248**

(գ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Վարձակալության գծով վճարումներ (հիմնական գումար և տոկոսներ)	**(121,224)**	**(32,377)**

(դ) Վարձակալության գծով պարտավորությունների և դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
	Վարձակալության գծով պարտավորություններ	***Վարձակալության գծով պարտավորություններ***
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**71,137**	**20,800**
Փոփոխություններ ֆինանսական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Վարձակալության հիմնական մասի վճարումներ	(112,353)	(28,129)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**(112,353)**	**(28,129)**
Ավելացումներ	179,206	78,466
Այլ փոփոխություններ		-
Պարտավորությունների հետ կապված		
Տոկոսային ծախս	8,871	4,248
Վճարված տոկոսներ	(8,871)	(4,248)
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	**-**	**-**
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**137,990**	**71,137**

15. Տրված փոխառություններ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Ոչ ընթացիկ		
Տրամադրված փոխառություններ կապակցված կողմին	492,150	495,907
Այլ փոխառություն	2,000	2,000
	494,150	**497,907**

հազ. դրամ				31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
	Արտար-ժույթ	Անվանական տոկոսա-դրույք	Մարման տարի	Անվանա-կան արժեք	Հաշվեկշռային արժեք	Անվանա-կան արժեք	Հաշվեկշռային արժեք
Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմին	ՀՀԴ	0%	2035	535,302	492,150	549,712	495,907
Այլ փոխառություն	ՀՀԴ	0%	2027	2,000	2,000	2,000	2,000
				537,302	**494,150**	**551,712**	**497,907**

16. Պաշարներ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Ապրանքներ	232,598	187,239
Ապրանքներ ճանապարհին	8,330	-
Պարտաստի արտադրանք	12,423	9,215
Անավարտ արտադրանք	1,626	1,780
Պահեստամասեր	10,202	59,230
Հումք և նյութեր	28,845	14,014
Վառելիք	665	1,100
Այլ	57,232	42,855
	351,921	**315,433**

17. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	537,244	547,909
Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	(38,587)	(34,036)
Ընդամենը առևտրային դեբիտորական պարտքեր	**498,656**	**513,873**
Տրված կանխավճարներ	86,830	11,942
Ստացվելիք հարկեր	30,252	25,289
Այլ	4,455	467
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**620,193**	**551,571**

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Ընկերության ենթարկվածության և արժեզրկումից կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

18. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Դրամարկղ	3,394	2,981
Բանկային հաշիվների մնացորդներ	8,781	21,289
Միասնական հարկային հաշվի մնացորդ	1,711	2,435
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**13,886**	**26,705**

Տոկոսադրույքի ռիսկին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

19. Կապիտալ և պահուստներ

(ա) Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալը կազմում է 50,050 հազ. դրամ (31 դեկտեմբերի 2024թ.ին՝ 50,050 հազ. դրամ):

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի մնացորդով:

2025թ-ին հայտարարվել է 105,263 հազ. դրամ շահաբաժին (2024թ-ին 105,263 հազ. դրամ շահաբաժին):

(գ) Մասնակիցներին բաշխումներ

Մասնակցին տրված անտոկոս փոխառության զեղչման արդյունքը ճանաչվել է սեփական կապիտալում որպես բաշխում::

20. Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա Ընկերության գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու և շուկայի մասնակիցների վստահությունը պահպանելու համար, որն իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման և հիմնականում գործառնական գործունեությունից ստացվող դրամական հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը՝ Ընկերությունը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Ստորև ներկայացված է Ընկերության պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Ընդամենը պարտավորություններ	2,746,197	2,209,458
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	13,886	26,705
Զուտ պարտավորություններ	**2,732,311**	**2,182,753**
Ընդամենը սեփական կապիտալ	**15,680**	**208,281**
Զուտ պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**174.25**	**10.48**

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման Ընկերության մոտեցումը չի փոխվել: Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների պահանջներ:

21. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Ընկերության տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված վարկեր	**865,173**	**846,330**
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված վարկեր	841,680	499,929
Գրավով չապահովված վարկեր	302,919	184,456
	1,144,599	**684,385**
	2,009,772	**1,530,715**

(ա) Պայմաններ և մարման ժամկետներ

Ստորև ներկայացված են չմարված փոխառությունների համար գործող պայմանները.

հազ. դրամ				***31 դեկտեմբերի 2025թ.***		***31 դեկտեմբերի 2024թ.***	
	Արտար-ժույթ	**Անվանական տոկոսա-դրույք**	**Մարման տարի**	***Անվանա-կան արժեք***	***Հաշվեկշռային արժեք***	***Անվանա-կան արժեք***	***Հաշվեկշռային արժեք***
Գրավով ապահովված վարկ	Եվրո	9.00%	2028	83,647	83,647	105,257	105,257
Գրավով ապահովված վարկ	Եվրո	8.00%	2028	828,828	828,828	435,994	435,994
Գրավով ապահովված վարկ	Եվրո	7.25%	2028	21,078	21,078	89,706	89,706
Գրավով ապահովված վարկ	Եվրո	7.25%	2027	150,945	150,945	174,681	174,681
Գրավով ապահովված վարկ	Եվրո	8.00%	2027	74,495	74,495	34,606	34,606
Գրավով ապահովված վարկ	Եվրո	8.25%	2027	71,225	71,225	87,331	87,331
Գրավով ապահովված վարկ	Եվրո	8.00%	2026	17,354	17,354	62,095	62,095
Գրավով ապահովված վարկ	Եվրո	6.50%	2026	187,087	187,087	-	-
Գրավով ապահովված վարկ	Եվրո	8.00%	2026	25,145	25,145	46,128	46,128
Գրավով ապահովված վարկ	Եվրո	7.50%	2026	59,659	59,659	82,778	82,778
Գրավով ապահովված վարկ	ՀՀԴ	9.00%	2028	48,066	48,066	61,753	61,753
Գրավով ապահովված վարկ	ՀՀԴ	9.00%	2027	7,938	7,938	12,913	12,913
Գրավով ապահովված վարկ	ՀՀԴ	9.50%	2027	25,221	25,221	36,017	36,017
Գրավով ապահովված վարկ	ՀՀԴ	10.00%	2027	69,166	69,166	101,500	101,500

Գրավով ապահովված վարկ	ՀՀՌ	13.25%	2026	37,000	37,000	15,500	15,500
Գրավով չապահովված վարկ	ՀՀՌ	16.00%	Ցպահանջ	4,773	4,773	-	-
Գրավով չապահովված վարկ	ՀՀՌ	16.00%	Ցպահանջ	49,998	49,998	-	-
Գրավով չապահովված վարկ	ՀՀՌ	11.65%	Ցպահանջ	248,147	248,147	184,456	184,456
				2,009,772	**2,009,772**	**1,530,715**	**1,530,715**

(բ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	**Ծնթգ.**	***Պարտավորություններ*** ***Վարկեր և փոխառություններ***
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ		**1,530,715**
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		-
Վարկերի և փոխառությունների ստացում		3,686,344
Վարկերի և փոխառությունների մարում		(3,315,150)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		**371,194**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ		**107,863**
Այլ փոփոխություններ		
Պարտավորությունների հետ կապված		
Տոկոսային ծախս	11	160,208
Վճարված տոկոսներ		(160,208)
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ		**-**
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**2,009,772**

հազ. դրամ	**Ծնթգ.**	***Պարտավորություններ*** ***Վարկեր և փոխառություններ***
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ		**1,489,295**
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Վարկերի և փոխառությունների ստացում		2,624,602
Վարկերի և փոխառությունների մարում		(2,492,769)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		**131,833**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ		**(90,413)**
Այլ փոփոխություններ		
Պարտավորությունների հետ կապված		
Տոկոսային ծախս	11	126,331
Վճարված տոկոսներ		(126,331)
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ		**-**
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**1,530,715**

22. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Առևտրային կրեդիտորական պարտքեր	352,303	527,765
Կրեդիտորական պարտքեր հիմնական միջոցների ձեռքբերման համար	18,687	8,280
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	81,822	56,231
Վճարվելիք հարկեր	94,901	14,850
Կրեդիտորական պարտքեր մասնակիցներին	30,707	233
Այլ	12,009	247

590,429	**607,606**

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված իրացվելիության ռիսկին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես հավասար է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Իրական արժեքի չափում

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Տեսակը	*Գնահատման մեթոդ*	*Նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ*
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Վարկեր և փոխառություններ	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Վարձակալության գծով պարտավորություններ	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն

(գ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Տնօրենների խորհրդին իր աշխատանքի վերաբերյալ:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ գնորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները և առաջանում է հիմնականում գնորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի հետ կապված:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն արտացոլում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերության պարտքային ռիսկը հիմնականում պայմանավորված է այն գնորդների անհատական բնութագրերով, որոնց հետ այն աշխատում է իր գործունեության տարածքներում: Ընկերությունը չունի սահմանված պարտքային քաղաքականություն, ըստ որի կվերլուծվեր յուրաքանչյուր նոր գնորդի վճարունակությունը: Ընկերությունը չի պահանջում գրավ առևտրային դեբիտորական պարտքերի համար, ինչպես նաև կանխավճար նախքան վաճառքը:

Պարտքային ռիսկը վերահսկելիս գնորդներից բազմությունից առանձնացվում են անհատապես նշանակալի

պարտքեր ունեցող գնորդները և դրանց համար կատարվում է անհատական վերլուծություն: Պորտֆելի մյուս գնորդների պարտքերը վերլուծվում են մարման ժամկետայնության տեսանկյունից և նախորդ տարիների փորձի հիման վրա կատարվում է արժեզրկման կորուստի գնահատում

Առևտրային դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին իր ենթարկվածությունը սահմանափակելու համար Ընկերությունը վճարման առավելագույն ժամկետ է սահմանել 60 օրը:

Ստորև ներկայացված է դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին ենթարկվածությունն՝ ըստ պայմանագրի կողմերի տեսակների:

հազ. դրամ	***Հաշվեկշռային արժեք***	
	2025թ.	***2024թ.***
Առևտրական դեբիտորական պարտքեր	498,657	513,873
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**498,657**	**513,873**

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում գնորդների համար

Ընկերությունն օգտագործում է պահուստավորման մատրից բոլոր գնորդներից ստացվելիք առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար, որը ներառում է մեծ թվով փոքր գումարով մնացորդներ:

Կորստի մակարդակը հաշվարկվում է նախորդ տարվա ընթացքում տվյալ գնորդի 12 ամսվա ընթացքում հավաքագրելիության գործակցով: Այդ գործակցի հիման վրա կանխատեսվում է ընթացիկ տարվա կորուստը՝ ճշտված փաստացի մարումներով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է գնորդներից ստացվելիք առևտրային և այլ դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների հետ կապված պարտքային ռիսկին ենթարկվածության և ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	***Կորստի միջին կշռված մակարդակ***	***Համախառն հաշվեկշռային արժեք***	***Կորստի պահուստ***	***Պարտքային առումով արժեզրկված***
Առևտրային դեբիտորական պարտքեր	7%	537,243	(38,587)	Ոչ
		537,243	**(38,587)**	

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն գնորդներից ստացվելիք առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների հետ կապված պարտքային ռիսկին ենթարկվածության և ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	***Կորստի միջին կշռված մակարդակ***	***Համախառն հաշվեկշռային արժեք***	***Կորստի պահուստ***	***Պարտքային առումով արժեզրկված***
Առևտրային դեբիտորական պարտքեր	6%	547,909	(34,036)	Ոչ
		547,909	**(34,036)**	

Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններ

Ստորև ներկայացված են առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխությունները տարվա ընթացքում:

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	34,036	-
(Դուրսգրում)/հակադարձում	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	4,551	34,036
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**38,587**	**34,036**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 8,781 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 21,289 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այդ ակտիվների հետ կապված: Ընկերությունը չի ակնկալում, որ պայմանագրի կողմերը չեն կատարի իրենց պարտականությունները:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի նաև 1,711 հազար դրամի չափով մնացորդներ

(2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,435 հազար դրամ) ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից կառավարվող միասնական հարկային հաշվին:

Ընկերության գնահատմամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետ բնույթի պատճառով:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգելու:

Ընկերությունն ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը, այդ թվում՝ ֆինանսական պարտականությունները կատարելու համար: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների, օրինակ՝ բնական աղետների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ ողջամտորեն կանխատեսել:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մարման ժամկետները դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները:

31 դեկտեմբերի 2025թ. ***հազ. դրամ***	***Հաշվեկշռային արժեք***	***Պայմանագ-ային դրամական հոսքեր***	***Ցպահանջ***	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**	**2-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ֆինանսական պարտավո-ություններ								
Գրավով ապահովված վարկ	1,706,853	1,740,979	-	178,584	758,197	493,784	310,414	1,706,853
Գրավով չապահովված վարկ	302,919	302,919	302,919	-	-	-	-	302,919
Վարձակալության գծով պարտավո-ություններ	137,989	161,995	-	9,211	48,739	54,767	47,510	137,989
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	495,528	495,528	-	495,528	-	-	-	495,528
	2,643,289	**2,701,421**	**302,919**	**683,323**	**806,936**	**548,551**	**357,924**	**2,643,289**

31 դեկտեմբերի 2024թ. ***հազ. դրամ***	***Հաշվեկշռային արժեք***	***Պայմանագ-ային դրամական հոսքեր***	***Ցպահանջ***	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**	**2-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ֆինանսական պարտավո-ություններ								
Գրավով ապահովված վարկ	1,346,259	1,836,547	-	11,730	83,838	936,782	804,198	1,346,259
Գրավով չապահովված վարկ	184,456	184,456	184,456	-	-	-	-	184,456
Վարձակալության գծով պարտավո-ություններ	71,136	185,109	-	3,666	19,448	57,950	102,278	71,136
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	592,755	-	-	-	-	-	-	592,755
	2,194,606	**2,206,112**	**184,456**	**15,396**	**103,286**	**994,732**	**906,476**	**2,194,606**

Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական հոսքերը կարող են առաջանալ նշվածից նշանակալիորեն ավելի վաղ կամ նշանակալիորեն տարբեր գումարներով:

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների և տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց օպտիմալ եկամտաբերություն:

Ընկերությունը չի կիրառում հեջի հաշվառում շահույթի կամ վնասի փոփոխականությունը կառավարելու համար:

Արժութային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է արժութային ռիսկին իր ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթներով արտահայտված վաճառքների, գնումների և փոխառությունների հետ կապված: Այդ գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով:

Ենթարկվածությունն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է Ընկերության ենթարկվածությունն արժութային ռիսկին ըստ անվանական գումարների:

հազ. դրամ	***Եվրոյով արտահայտված 2025թ.***	***Եվրոյով արտահայտված 2024թ.***
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1	5,393
Արևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(227,632)	(502,749)
Վարկեր և փոխառություններ	(1,521,635)	(1,038,140)
	(1,749,266)	**(1,535,496)**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	**Միջին փոխարժեք**		**Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ**	
	2025թ.	***2024թ.***	***2025թ.***	***2024թ.***
1 Եվրո	446.94	424.86	449.01	413.89

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի ողջամտորեն հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

հազ. դրամ	**Արժևորում**	**Արժեզրկում**
	Շահույթ կամ վնաս	**Շահույթ կամ վնաս**
31 դեկտեմբերի 2025թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն Եվրոյի նկատմամբ	(174,927)	174,927
31 դեկտեմբերի 2024թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն Եվրոյի դոլարի նկատմամբ	(153,550)	153,550

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում վարկերի վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք):

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության բոլոր տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքը հաստատուն է:

Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե, որ տոկոսադրույքը՝ հաստատուն թե փոփոխուն, ավելի բարենպաստ կլինի Ընկերության համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

24. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր շենքերի և սարքավորումների համար, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից: Քանի դեռ Ընկերությունը չունի

համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է նշանակալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Ընկերությունը ընդգրկված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Վերը նշված հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել զարգացած երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համարժեքորեն է ճանաչել հարկային պարտավորությունները Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

25. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Հսկողություն

Ընկերության մասնակիցները ֆիզիկական անձիք են: Ընկերության վերջնական հսկող կողմ է հանդիսանում պարոն Գրիգոր Մանթաշյանը, ով նաև իրականացնում է Ընկերության տնօրենի գործառույթը:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Ստորև ներկայացված է տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմի կողմից ստացված վարձատրությունը, որը ներառված է վարչական ծախսերում:

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Աշխատավարձ և պարգևավճարներ	**29,299**	**21,746**

(գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

հազ. դրամ	***Գործարքի գումարը 2025թ.***	***Գործարքի գումարը 2024թ.***	***Մնացորդը 2025թ.***	***Մնացորդը 2024թ.***
Տրված փոխառություններ				
Վերջնական հսկող կողմ, տնօրեն	292,044	255,248	492,150	495,907

26. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

27. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Հասույթ

Գնորդների հետ պայմանագրերին վերաբերող Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

(բ) Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ կորուստը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(գ) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են դրամով գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են դրամով այդ ամսաթվի փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով գործառնություններից օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով ամորտիզացված արժեքի՝ ճշգրտված ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(դ) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների համար:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

(ե) Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

(զ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի գծով ծախսումները, նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած այլ ծախսումները, հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև դրանց զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «այլ եկամուտ/այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը զուգընթաց:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

– Շենքեր և կառուցվածքներ	30 տարի
– Մեքենաներ և սարքավորումներ	5-8 տարի
– Փոխադրամիջոցներ	5-8 տարի
– Այլ	1-8 տարի

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(է) Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը որոշելի ոչ դրամային ակտիվն է՝ առանց ֆիզիկական սուբստանցիայի, որն ունի 12 ամսից ավելի օգտակար ծառայության ժամկետ:

(i) Ճանաչում

Ընկերության կողմից ձեռք բերված այլ ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

(iii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելուն զուգընթաց:

(iv) Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում՝ դրանց շահագործման համար մատչելի դառնալու պահից՝ կիրառելով գծային մեթոդը, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

– Այլ	10 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ը) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրային դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրային դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվներ. հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դասին: Այդ ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող

դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են կամ չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը նաև երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչելիս մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարը միայն այն դեպքում, երբ Ընկերությունը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(թ) Կանոնադրական կապիտալ

Բաժնեմասերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ:

(ժ) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Ընկերությունը որոշում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Ընկերության անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է ապագայամետ տեղեկատվությունը:

Ընկերությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ գնորդն ամբողջությամբ կկատարի պարտքի մարման իր պարտականություններն Ընկերության նկատմամբ, եթե Ընկերությունը չձեռնարկի համապատասխան քայլեր, կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Ընկերությունը ենթարկված է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են պարտքային կորուստների հավանականությամբ կշռված պարտքային կորուստների գնահատականը: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը):

Առևտրային դեբիտորական պարտքերի կարճ ժամկետի պատճառով ակնկալվող պարտքային կորուստները չեն զեղչվում:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- Փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- Պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունը այլ պայմաններում չէր դիտարկի,
- Հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Իր ֆիզիկական անձ գնորդների համար Ընկերությունը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքը դուրս գրելու քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան երեք տարի ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գումարների փոխհատուցման անցյալ ժամանակաշրջանների փորձը: Ընկերությունը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Այդպիսի հայտանիշի առկայության դեպքում գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ դրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած օտարման ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև հարկումը զեղչման այն դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին ներհատուկ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները տեղաբաշխվում են՝ դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները համամասնական հիմունքով նվազեցնելու համար:

Ղեկավարությունը կառավարում է Ընկերությունը որպես մեկ դրամաստեղծ միավոր:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(հ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով մինչև հարկումն այն դրույքով, արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատականը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(լ) Վարձակալություն

(i) Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապամոնտաժման և քանդման կամ վերջինիս վերականգնման կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Ընկերությանը չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Ընկերությունը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Ընկերությունը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Ընկերությունը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմնվելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքների վրա, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե վարձակալության գծով պարտավորությունն ապաճանաչվում է, ապա ապաճանաչումը հաշվառվում է ՖՀՄՍ 9-ի համաձայն: Այս մոտեցման համաձայն՝ Ընկերությունն ապաճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը ներված վարձավճարների ներկա արժեքի չափով՝ շահույթի կամ վնասի համապատասխան ճշգրտումով, իսկ վարձակալության գծով պարտավորությունը չի վերաչափվում:

Ընկերությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների, այդ թվում՝ փոխադրամիջոցների վարձակալության համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Ընկերությունը ճանաչում է որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

(խ) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2025թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը ժամկետից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները, բացառությամբ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան կատարելագործումների. Հրապարակում 11: ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան կատարելագործումների. Հրապարակում 11 կիրառման ազդեցությունը բացահայտված է Ծանոթագրություն 27-ում:

(i) **ՖՀՄՍ 18 *«Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում»***

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնություններ և շահութաբաժին: Կազմակերպություններից նաև պահանջվում է ներկայացնել նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվում:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից մեկ ծանոթագրությունում:
- Տրամադրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:

Ներկայումս Ընկերությունը գնահատում է նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես, շահույթի կամ վնասի մասին հաշվետվության, դրամական հոսքերի մասին հաշվետվության կառուցվածքի և ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ կապված: Ընկերությունը նաև գնահատում է ազդեցությունը ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վրա, այդ թվում՝ այն հոդվածների համար, որոնք ներկայումս նշվում են որպես «այլ»:

(ii) **Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ**

Ստորև ներկայացված նոր և փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)